- Կենտրոնի սոցիալական աշխատող Լ. Շահբազյանը անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով **33** ընտանիքի անդամի հետ, որից **26** մայր և **3** հայր, **1** տատիկ:

Հաշվետու ժամանակահատվածում անհատական խորհրդատվություն է իրականացրել թվով **29** շահառու ծնողի և **4** ընտանիքի անդամների հետ: Անհատական հանդիպումների նպատակը եղել է շահառու ընտանիքիների կարիքների գնահատումը և վերագնահատումը, շահառու երեխաների սոցիալական, կրթական, հոգեբանական և առողջապահական կարիքների վերհանմանը և համապատասխան աջակցության տրամադրմանը:

Անհատական աշխատանքների արդյունքում թարմացվել է շահառուների ընտանեկան գենոգրամը և էկոգրամը, հավաքագրվել են սոցիալական պատմությանը վերաբերյալ տվյալներ, թարմացվել է անհատական միջամտության պլանը հաշվի առնելով ինչպես երեխայի կարծիքը, այնպես էլ ծնողի կարծիքը:

Անհատական աշխատանքները ծնողների և ընտանիքի անդամների հետ նպաստել են ծնող-երեխա, երեխա-ընտանիքի անդամ փոխհարաբերությունների, կոնֆլիկտային հարաբերությունների կարգավորմանը: Անհատական աշխատանքները ուղղված են եղել նաև երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների գիտակցմանը և ընդունմանը, երեխաների վարքային խնդիրների հաղթահարմանը, ծնողավարման, կենցաղավարման, ֆինանսական հմտությունների զարգացմանը:

Անհատական խորհրդատվությունների ընթացքում քննարկվել են նաև Փոքրիկ Իշխան կենտրոնի կարգապահական կանոնների պահպանման անհրաժեշտության կարևորությունը:

Ծնողների հետ անհատական խորհրդատվությունները իրականացվել են նաև շահառու երեխաների բացակայությունների կանգավորման և դեպքերի դուրս գրմանն ուղված:

Շահառուների երկարաժամկետ բացակայությունների դեպքում անհատական խորհրդատվությունների ընթացքում ծնողի կողմից լրացվել է հատուկ դիմում, որով շահառուների բացկայությունները Փոքրիկ Իշխան կենտրոնում դիտարկվել են հարգելի:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դաքաղյանը անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով **23** ընտանիքի անդամի հետ, որից՝ **20** մայր, **1** հայր, **1** տատիկ, **1** քույր:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է անհատական խորհրդատվություն շահառու ծնողների հետ: խորհրդատվությունները ուղղված են եղել երեխայի և նրա ընտանիքի կարիքների գնահատմանը և վերագնահատմանը, ընտանիքի սոցիալական միջավայրը բացահայտելուն, ծնող-երեխա փոխհարաբերությունների բնույթին: Ծնողների հետ անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել նաև շահառու երեխաների բացակայությունների կանոնավորման, հակասոցիալական վարքագծի կանխարգելմանը, ծնողի և երեխայի կողմից Փոքրիկ Իշխան կենտրոնի կարգապահական կանոնների պահպանմանը, երկարաժամկետ բացակայությունների վերաբերյալ դիմումների լրացմանը,տաք սննդից օգտվելու կարևորության գիտակցմանը, որը նպաստում է նաև շփման, հաղորդակցման հմտությունների զարգացմանը, ծնողի կողմից լրացվել է դիմում, որով հրաժարվել է տաք սննդից, կարևորելով ժամանակը հատկացնել հոգեբանական և լոգոպեդական աշխատանքին:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով **22** ընտանիքի անդամի հետ, որից **21** մայր, **1** տատիկ:

Հաշվետու ժամանակահտվածում իրականացվել է անհատական խորհրդատվություն շահառու ծնողների հետ, հանդիպումների ընթացքում **4** ծնողի հետ իրականացվել է շահառուների առաջնային կարիքների գնահատում, ծնողները ներկայացրել են երեխաների մոտ առկա դժվարությունները, սոցիալ-հոգեբանական, լոգոպեդական խնդիրները: